Հավելված 2
ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
1998թ.օգոստոսի 28-ի
№39 որոշման

Էներգետիկայի բնագավառում էլեկտրական կայանների կառուցման, էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում արտադրական շինարարության լիցենզիա ստանալու համար ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող

«ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ»

փաստաթղթի կազմը և բովանդակությունը

«Հաստատում եմ՝»

_____
Ընկերության կանոնադրությամբ սահմանված՝
կառավարման իրավասու մարմնի ղեկավար՝

_____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«____» _____199__ թ.

Կ.Տ.

_____ **ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ)**
(օբյեկտի անվանումը)

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Ներածություն

1.1 Կառուցման (շինարարության) նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը:

1.2 Տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման ժամանակ օգտագործված փաստաթղթերի, հետազոտությունների արդյունքների, տեղեկատվական նյութերի ցանկը:

1.3 Կառուցվող օբյեկտի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցոցանիշները:

1.4 Տեղեկություններ շինմոնտաժային ծառայությունների շուկայի և հիմնական սարքավորումները արտադրողների (առաքողների) մասին:

2. Շուկայի ուսումնասիրություն

2.1 Արտադրանքի (ծառայության) իրացման հնարավորությունները և արտադրական ծրագիրը (հավելված 1):

3. Հիմնական տեխնոլոգիական լուծումներ

3.1 Արտադրության(ծառայության) տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության հիմնավորումը:

3.2 Արտադրության (ծառայության) արտադրատեխնոլոգիական և կազմակերպական կառուցվածքը:

4. Օբյեկտի ապահովումը անհրաժեշտ նյութերով և հումքով[1]

4.1 Հումքի, նյութերի, վառելիքի, էլեկտրական և ջերմային էներգիայի, կիսաֆաբրիկատների և այլնի տարեկան պահանջարկը, ձեռքբերման աղբյուրները և մատակարարումների հուսալիության գնահատականը:

5. Օբյեկտի կառուցման (շինարարության) տարածքը[2]

5.1 Օբյեկտի տեղաբաշխման հիմնավորումը:

5.2 Քարտեզագրական և այլ նյութեր, այդ թվում կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցումներին և ինժեներական ցանցերին միացման կետերը, օբյեկտի գլխավոր հատակագիծը:

6. Հիմնական շինարարական լուծումներ

6.1 Օբյեկտի շինությունների և կառույցների հիմնական բնութագրերը:

---

[1] ՀԷԿ-ի կառուցման դեպքում սույն փաստաթղթին կցվում է նաև ջրաօգտագործման թույլտվությունը:

[2] Սույն փաստաթղթին կցվում է տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնությունը հողահատկացման վերաբերյալ:

6.2 Կառուցման (շինարարության) ժամանակացույցը:

6.3 Նախնական լուծումներ օբյեկտի էներգամատակարարման (սնման), ջրամատակարարման, կոյուղու և այլնի վերաբերյալ:

7. Շրջակա միջավայրի վրա օբյեկտի ազդեցության գնահատումը[3]

7.1 Օբյեկտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:
7.2 Նախնական բնապահպանական լուծումներ:

8. Կադրեր

8.1 Աշխատակազմի թվաքանակն ըստ կատեգորիաների:

8.2 Նկատառումներ կադրերի հավաքագրման և պատրաստման վերաբերյալ:

9. Ներդրումների արդյունավետությունը

9.1 Ներդրումների արդյունավետության գնահատումը կատարվում է հաշվի առնելով՝

- կառուցման (շինարարության) արժեքը,
- ֆինանսավորման հնարավոր աղբյուրները և ֆինանսավորման պայմանները,
- հիմնական արտադրանքի ինքնարժեքը,
- գործունեության հիմնական ցուցանիշների հնարավոր փոփոխությունը հաշվարկային ժամանակաշրջանում,
- ներդրումների ռիսկի գնահատականը,
- օբյեկտի նախագծման, կառուցման(շինարարության) և նախագծային հզորությամբ գործարկման ժամկետները,

9.2 Ներդրումների արդյունավետությունը հիմնավորող տեղեկատվություն՝

- ներդրումների կառուցվածքի մասին (հավելված 2)
- վարկերի կամ այլ փոխառությունների մասին (հավելված 3)
- եկամուտների հաշվետվության մասին (հավելված 4)
- դրամական միջոցների հոսքերի հաշվետվություն (հավելված 5)

10.Եզրակացություններ

10.1 Կառուցման (շինարարության) տնտեսական անհրաժեշտությունը և առևտրային, տնտեսագիտական ու սոցիալական նպատակահարմարությունը:

10.2 Կառուցման (շինարարության) իրականացման տեխնիկական հնարավորությունները:

10.3 Նկատառումներ օբյեկտի նախագծման, կառուցման (շինարարության), թողարկման և շահագործման վերաբերյալ:

---

[3] Սույն փաստաթղթին կցվում է բնապահպանական մարմինների եզրակացությունը:

10.4 Նախագծման և անհրաժեշտ հետազոտությունների կատարման, ներդրումների իրականացման ժամանակացույցը:

10.5 Կառուցման (շինարարության) հիմնական տեխնիկատնտեսական և ֆինանսական ցուցանիշները (ամփոփ):

Հավելված 2-3
ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
1998թ.օգոստոսի 28-ի
№39 որոշման

Էներգետիկայի բնագավառում էլեկտրական և ջերմային էներգիայի ու բնական գազի բաշխման լիցենզիա ստանալու համար ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ»

փաստաթղթի կազմը և բովանդակությունը

_____ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության անվանումը)

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

1. Լիցենզավորվող գործունեության տարածքի (սպասարկման տարածքի) անվանումը և համառոտ նկարագրությունը:
2. Լիցենզավորվող գործունեության տարածքը (սպասարկման տարածքը) ՀՀ մարզային բաժանման կամ կոնկրետ մարզի քարտեզի (քարտեզի պատճենի) վրա (չափացույցը ցանկացած՝ 1:20000-ից մինչև 1:5000 տիրույթում):
3. Լիցենզավորվող գործունեության տարածքի (սպասարկման տարածքի) առանձնահատկությունները, այդ թվում տարածքի որոշ գոտիներում բաշխում իրա-կանացնող այլ տնտեսավարող սուբյեկտների առկայությունը և նրանց հետ պայմա-նական սահմանի և սահմանազատման կետերի նկարագրությունը:

Հավելված 2-1
ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
1998թ.օգոստոսի 28-ի
№39 որոշման

Էներգետիկայի բնագավառում էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման ու բաշխման, բնական գազի փոխադրման և բաշխման լիցենզիա ստանալու համար
ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող

«ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ»

փաստաթղթի կազմը և բովանդակությունը

_____ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության անվանումը)

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1. Լիցենզավորվող գործունեության ընդհանուր նկարագրությունը

1.1. Լիցենզավորվող գործունեության նկարագրությունը:

1.2. Այլ գործունեության համառոտ նկարագրությունը:

2. Տեխնիկական բնութագրերը

2.1. Արտադրության (ծառայության) դրվածքային հզորությունը (թողունակությունը) և հիմնական տեղակայանքների և սարքավորումների քանակությունը, տեխնիկական բնութագրերը, գործարկման և վերջին հիմնական նորոգման (փոխարինման) տարեթվերը (բաշխման ցան-ցերի համար լրացուցիչ՝ սպառողների թվաքանակը՝ ըստ խմբերի և սպառման որորտների):

2.2. Արտադրության (ծառայության) սկզբունքային տեխնոլոգիական ուրվակը (բաշխող ցանցերի համար՝ տեխնոլոգիական ուրվակներն ըստ տարածքային մասնաճյուղերի):

2.3. Համառոտ տեղեկություններ շենքերի, շինությունների, կառույցների*, բաց տարածքների մասին:

2.4. Ընկերության տեղակայման վայրը:**

2.5. Տեղագրական քարտեզները՝ ըստ մասնաճյուղերի սպասարկման տարածքների (միայն բաշխողների համար):

2.6. Շշահագործվող հիմնական տեղակայանքների և սարքավորումների համառոտ բնութագրերը:

2.7. Տեղեկություն բնապահպանական հիմնահարցերի և նրանց լուծմանն ուղղված միջոցառում-ների մասին:

2.8. Շահագործման համար անհրաժեշտ սարքավորումներով, տրանսպորտային միջոցներով ու մեխանիզմներով զինվածության աստիճանը:

2.9. Վիճակագրական տվյալներ վերջին 10 տարիների համար (ըստ տարիների):

- արտադրության (ծառայության) ծավալները, տեխնոլոգիական կորուստները, սեփական կարիքների համար ծախսը, օգտակար առաքումը (ՀԷԿ-ի համար լրացուցիչ՝ օգտագործված ջրի քանակությունը, գազի փոխադրման գործունեության համար լրացուցիչ՝ ԳՍՊԿ-ում պահեստավորված գազի ծավալը),

- վառելիքի տեսակարար ծախսը (միայն ՋԷԿ-ի, ջերմային կայանների և գազի փոխադրման գործունեության (ԳՍՊԿ) համար),

- աշխատակազմի թվաքանակը (արտադրական աշխատակազմի թվաքանակը՝ առանձին տողով):

Ընկերության գործադիր նախագահի (տնօրենի) ստորագրությունը

_____

(անուն, ազգանուն)

Կ.Տ.

---

* ՀԷԿ-ի համար լրացուցիչ տեղեկություն հիդրոտեխնիկական կառույցների (պատվար, դերիվացիոն ջրանցք, ճնշման օրական կարգավորման ավազաններ, խողովակշարեր), ջրամատակարարման աղբյուրի, ջրառի տարեկան առավելագույն և նվազագույն քանակությունների մասին:

** Արտադրողների համար լրացուցիչ՝ գլխավոր հատակագիծը: